
ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԲԿԻՐԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ

ՄԱՆԱՍ ՆԱԶԱՐՅԱՆ

Արաբկիրի բարբառը հայերենի քիչ ուսումնասիրված բարբառներից է¹: Նրա հետազոտությանը վերաբերող միակ փոքրիշատե ծավալուն աշխատությունը, թերևս, լեզվաբան Սարգիս Դավիթ Բեկի «Արաբկիրի գավառաբարբառը»² ուսումնասիրությունն է, որը, սակայն, իր անվիճելի արժանիքներով հանդերձ, հեռու է ամբողջական և կատարյալ լինելուց: Արաբկիրի բարբառին մասնակիորեն անդրադարձել է նաև անվանի լեզվաբան Հր. Աճառյանը³: Սակայն, մեր կարծիքով, և՛ Ս. Դավիթ Բեկը, և՛ Հր. Աճառյանը Արաբկիրի բարբառն ուսումնասիրելիս, ըստ երևույթին, շփվել են իրենց բնօրրանից վաղուց կտրված, օտար միջավայրերում այլ լեզուների կամ բարբառների ազդեցությամբ իրենց մայրենին անադարտ չպահած արաբկիրցիների հետ, ուստի և գրանցել են նաև անճշտություններ: 1946–47 թթ. Սփյուռքից ներգաղթած և Երևանի Արաբկիր թաղամասում բնակություն հաստատած արաբկիրցիները միատեսակ չէին խոսում Արաբկիրի բարբառով. օր.՝ Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից ներգաղթած արաբկիրցիների խոսքում բարբառը դարձել էր խլազուրկ: Ըստ երևույթին՝ Արաբկիրի բարբառն ուսումնասիրող լեզվաբանները գրուցել են հայրենադարձ արաբկիրցիների հետ: Թերևս այդ է պատճառը, որ Արաբկիրի բարբառը համարել են խլազուրկ, ճիշտ չեն ներկայացրել բայի խոնարհման ձևերը և այլն: Այսպես՝ «Հայկական սովետական հանրագիտարանի» առաջին հատորում զետեղված «Արաբկիրի բարբառ» հոդվածում (հեղինակ՝ Ա. Ղարիբյան) նշված է. «Պատկանում է կը ճյուղի եռաստիճան խլազուրկ խմբին (բհ, բ, փ)»⁴: Հարկ է նշել, որ բարբառը բնավ էլ խլազուրկ չէ: Դա հաստատում է նաև ծնունդով արաբկիրցի լեզվաբան Սարգիս Դավիթ Բեկը վերոհիշյալ աշխատության մեջ: «Արաբկիրի բարբառին մեջ կան ամեն տեսակ բաղաձայններ»⁵, – գրում է նա: Բերենք օրինակներ, որոնք բարբառում արտաբերվում են այնպես, ինչպես ներկայացնում ենք. Պէյօս (Պետրոս), պաճճօս (պատրոս), պատինճան (բաղրջան), պըլտիկ (լոլիկ), տունճիկ (տնակ), ծային (ուրց), ճի-

¹ Հոդվածագիրը բնիկ արաբկիրցի է, պատմական Արաբկիրում ապրել է մինչև հինգ տարեկան հասակը, ապա 1928 թ. վերաբնակվել է Երևանի մատույցներում 1925 թ. հիմնադրված Նոր Արաբկիր թաղամասում: Այստեղ նախապես բնակություն էին հաստատել միայն պատմական Արաբկիրից գաղթած բնիկ արաբկիրցիները, որոնց միջավայրում բարբառը երկար ժամանակ պահպանվում էր անադարտությամբ. այժմ էլ այն դեռ կենդանի է մեծահասակների խոսքում: Հոդվածագիրը 1947 թվից ուսումնառել է ԵՊՀ-ի բանասիրական բաժնում, եղել է Ար. Ղարիբյանի ուսանողը (խմբ.):

² Մ է Լ ի ք Ս. Դ ա վ ի թ Բ ե կ. Արաբկիրի գավառաբարբառը, Վիեննա, 1919:

³ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Արաբկիրի բարբառ, Երևան, 1951, էջ 348-349:

⁴ Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 1, Երևան, 1974, էջ 677:

⁵ Մ է Լ ի ք Ս. Դ ա վ ի թ Բ ե կ. նշվ. աշխ., էջ 384:

րագ՞ու (ճրագու), կանաս (կեռաս). նմանապես փոխառյալ բառերում ձայնեղ հնչյունը Արաբկիրի բարբառում արտաբերվում է խուլ.

օր. թրք. գ՛օլ «ջրափոս» – Արաբ. կօլ (օր. Կօլին ջ՞ուրը գ՛օլ էր:)

բախչա – պախճա
 գանբա – տանբա
 գանմիբչի – տանմիբճի
 ջան – ճան
 ջեպ (գրպան) – ճեպ

Արդեն Նոր Արաբկիրում բարբառի մեջ մուտք գործած բենզին բառը արաբկիրցին արտաբերում է պանզին, բազար-ը պազար, բոյին (սպանդանոց) բառը պոյին:

Կարելի է այլ օրինակներ նս բերել, բայց, կարծում ենք, այսքանն էլ բավական է համոզվելու համար, որ, իրոք, բարբառը իլագուրկ չէ:

«Հայկական սովետական հանրագիտարանում» անճշտություններով է ներկայացված նաև բարբառի բայի սահմանական եղանակի ներկա ժամանակը: Այսպես. «Սահմանական ներկան կազմվում է հետադաս գու մասնիկով (ձայնավորով սկսվող բայերի մոտ այն կրկնվում է՝ գրսա գու, գառնա գու, գերթամ գու)»⁶: Նախ՝ Արաբկիրի բարբառում այս բայաձևերը հնչում են՝ կըսամ կու, կառնա կու, կերթամ կու (երթամ՝ ր-ով ձև բարբառը չունի), ապա նկատենք նաև, որ նշված բայաձևերը բարբառում բոլորովին էլ սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևեր չեն, այլ նշանակում են՝ կասի, կառնի, կգնամ, այսինքն՝ պայմանական (ենթադրական) եղանակի բայաձևեր են: Դրանց ներկա ժամանակի բայաձևերն են՝ կըսամ նը, գառնա նը, կերթամ ը.

օր.

– Ախչի՛, ատ Պիլպիլ խանումը էկեր, ի նչ կըսամ նը:

– կըսամ նը՝ ասօր թուր տի թօթվինք, էկէք, օր չանբսամ Ֆը բըռնէք:

– Հա՛, կերթանք կու, բըռնինք կու:

– Վաղն ա(լ) մէր թուրթը թօթվինք, հասէր ան: Երբեկվան կերթամ Թումիկանց կըտուօցն ալ (կանանց էլ) կու կանչիմ:

Հանրագիտարանի վերոհիշյալ հոդվածում նշվում է, թե Արաբկիրի բարբառի ներկա շարունակականը կազմվում է «վերջից նաև ա > ը (գերթամ > ա > ը)»⁷ մասնիկով:

Արաբկիրի բարբառի ներկա շարունակականը կազմվում է ըղձական եղանակից, որի վրա ավելանում է ը (< ա < ահա ձևից մաշված) մասնիկը, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ՝ նաև կ մասնիկը.

օր. ըղձական եղանակ՝ էթամ, խաղամ.

սահմանական եղ. ներկա՝ կերթամ ը, խաղամ ը:

⁶ ՀՄՀ, հ. 1, էջ 677:

⁷ Նույն տեղում:

Բացառություն են կազմում բաղաձայնով սկսվող լալ, գալ, տալ անկանոն բայերը, որոնց սահմանական ներկան կազմվում է կու մասնիկով՝ կու լամ ը, կու գ՛ամ ը, կուտամ ը:

Սահմանական եղանակի ներկա ժամանակի վրա երբեք ա մասնիկ չի դրվում: Բարբառն ուսումնասիրողները երևի նկատի են ունեցել բարբառում գործածվող այն ձևը, երբ բայի վրա դրվող ալ շաղկապի լ-ն կրճատվում է, չի հնչում.

օր.

– Ծո, դ՛ու ն վաղը Շեփիկ կէթաս կու գ՛ա՛ս:

– Է՛, անկա՛ր (եթե) պետք ան՛ նա, կէթամ ա(լ), կու գ՛ամ ա(լ):

Վերոհիշյալ հոդվածում հնչունապես ճիշտ չի ներկայացված նաև Արաբկիրի բարբառի հարկադրական եղանակի կազմությունը. «Հարկադրականը՝ բաղաձայնի մոտ՝ հետադաս դի, ձայնավորի մոտ՝ նախադաս դ (խմիմ դի, դէթամ) մասնիկներով»⁸: Իրականում Արաբկիրի հարկադրական եղանակը կազմվում է ոչ թե դի, դ, այլ տի, տ մասնիկներով, որոնք դրվում են ըղձական եղանակի վրա: Տի մասնիկը կարող է դրվել ձայնավորով և բաղաձայնով սկսվող բայերից և՛ առաջ, և՛ հետո.

օր.՝ տուտիմ, տի ուտիմ, ուտիմ տի, տուտիմ տի.

խաղամ տի, տի խաղամ (երբեմն նաև մասնիկի կրկնությամբ՝ տի խաղամ տի), իսկ տ մասնիկը դրվում է միայն ձայնավորով սկսվող բայերից առաջ.

օր.՝ տառնամ (պիտի առնեմ), տէթամ (պիտի երթամ), տուտիմ, տըսիմ, նաև մասնիկի կրկնությամբ՝ տառնամ տի, տէթամ տի, տուտիմ տի, տըսիմ տի:

– Յէս վաղը Նաչարենցը տէթամ, տըսիմ տի, յօր շիրիկվան մէր տունը գ՛ան:

– Յէս վաղը ճ՛էր տունը տի գ՛այի, ըմնա հըմա փուշման էղա, չիպտի գ՛ամ:

Մի դիտողություն էլ «Հայկական սովետական հանրագիտարանի» առաջին հատորում զետեղված «Արաբկիր» հոդվածի մասին (հեղինակ՝ Մ. Ճևահիրճյան): Հոդվածում կարդում ենք, որ պատմական Արաբկիրը «կառուցվել է 1021–22-ին՝ Վասպուրականից Սեբաստիայի գավառ գաղթած հայերի կողմից, Արաբրակնուա անունով հռոմեական բերդաքաղաքի մոտակայքում»⁹: Հոդվածի վերջում հեղինակը նշում է աղբյուրը, որից քաղել է տեղեկությունը: Դա Անդրանիկ Փոլատյանի «Պատմություն Հայոց Արաբկիրի» աշխատությունն է¹⁰: Այս աշխատության մեջ, սակայն, զետեղված են պատմական Արաբկիրի հիմնադրման, նրա անվան ստուգաբանության մասին իրարամերժ տեսություններ, կարծիքներ: Բնավ նպատակ չունենք անդրադառնալ այդ տեսություններին, որոնց, անշուշտ, հոդվածագիր Ճևահիրճյանը ծանոթ է եղել, բայց, ըստ երևույթին, հոդվածը գրելու համար հիմք է ընդունել միայն վերոհիշյալ գրքում զետեղված անվանի պատմաբան Միքայել Չամչյանի «Պատմություն հայոց» գրքից մեջբերված մի հատված, որում պատմաբանը, անդրադառնալով 1021 թվականին Վասպուրականի Սենեքերիմ Հովհաննես թագավորի գլխավորությամբ Վասպուրականից հայերի գաղթին Սեբաստիա և դրան հարող շրջանները,

⁸ Նույն տեղում:

⁹ ՀՄՀ I, էջ 676:

¹⁰ Ա. Փոլատյանի ն. Պատմություն Հայոց Արաբկիրի, Նյու Յորք, 1969:

գրում է. «Շինեցին եւ ունանք յիշխանաց նորա քանի մի քաղաքս, ընդ որոս և զքաղաքն Ակնա առ Եփրատաւ եւ զԱրաբկիր եւ զայլս»¹¹: Հողվածագիրը հաշվի չի առել «Պատմություն Հայոց Արաբկիրի» գրքում զետեղված այլ պատմաբանների կարծիքները պատմական Արաբկիրի ստեղծման մասին:

Մենք ստիպված ենք երկու մեջբերում կատարել վերոհիշյալ աշխատությունից: Ահա մի հատված պատմաբան Եղիա Քասունու տեսությունից. «Բայց նախ ուրիշ հարցում մը. ինչո՞ւ անպատճառ ջանք կըլլա Արաբկիր անունը հայերենով կամ մինչև իսկ թրքերենով ստուգաբանել. որովհետև այս ջանքերը կմատնեն սա գաղափարը, թե քաղաքս նախ Արաբներու արշավանքներու կամ Սենեքերիմ Արծրունիի և կամ Օսմանյան թուրքերու օրով առած է իր գոյությունը: Մինչդեռ ամեն պատճառ կա ընդունելու, թե քաղաքս գոյություն ուներ ներկա վայրին վրա և կամ անկե ոչ շատ հեռու»¹²: Երկրորդ հատվածը նույն աշխատության մեջ զետեղված պատմական Արաբկիրի երբեմնի հոգևոր առաջնորդ Մուշեղ Սերոբյանի՝ Արաբկիրի մասին գրած աշխատությունից է. «Հինեն ի վեր հաստատված այս Արաբկիրն է, որ իրենց բնակավայր կ'ընտրեն Սենեքերիմի հետ Վասպուրականեն գաղթող հայերեն մաս մը»¹³:

Բնչպես տեսնում ենք այս մեջբերումներից, Արաբկիր քաղաքը գոյություն է ունեցել վաղուց (վերոհիշյալ գրքում կան այն հաստատող նաև այլ պատմաբանների կարծիքներ): Ուրեմն, Սենեքերիմի հետ Վասպուրականից գաղթածները ոչ թե հիմնել են Արաբկիրը, այլ նրանց մի մասը միայն բնակություն է հաստատել Արաբկիրում: Սա հաստատում է նաև Արաբկիրի բարբառը: Եթե Արաբկիրը հիմնած լինեին Վասպուրականից գաղթած հայերը, ապա, բնական է՝ Արաբկիրի բարբառը որոշ հատկանիշներով կհիշեցներ Վասպուրականի որևէ բնակավայրի բարբառը: Բայց Արաբկիրի բարբառում այդ բարբառներից որևէ մեկի հետքն անգամ չկա: Սա, կարծում ենք, կհաստատեն նաև բարբառագետները:

Ուրեմն, իրոք, արդեն գոյություն ունեցող Արաբկիրում բնակություն են հաստատել միայն սակավաթիվ գաղթական վասպուրականցիներ, որոնք, անշուշտ, բարբառի վրա ազդեցություն ունենալ չէին կարող:

Կարծում ենք՝ պետք է վերանայել «Հայկական սովետական հանրագիտարանում» զետեղված «Արաբկիր» հոդվածում արտահայտված հետևությունը պատմական Արաբկիրի հիմնադրման մասին՝ հաշվի առնելով մեր դիտողությունները և, իհարկե, բարբառագետների կարծիքը:

¹¹ Ա. Փոլատյանի «Պատմություն Հայոց Արաբկիրի» աշխատության՝ «Հին և նոր Արաբկիր» գլխից, էջ 57:

¹² Նույն տեղում, էջ 21:

¹³ Նույն տեղում, էջ 57: